ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը** ՝ Վահե Գրիգորյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ կառավարությանն ենթակա միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի տեղակալ
3. **Գործուղման վայրը/ժամկետը՝** Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2021 թ. սեպտեմբերի 20-22
4. **Հրավիրող կողմը՝** Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (այսուհետ՝ ԱԷՄԳ)
5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցել ԱԷՄԳ 65-րդ գլխավոր համաժողովի նստաշրջանին
6. **Քննարկված թեմաները** - Համաժողովի ընթացքում քննարկվել են ԱԷՄԳ 2020թ. Հաշվետվությունը, միջուկային անվտանգության 2021թ. զեկույցը, միջուկային և ճառագայթային անվտանգությանը վերաբերող հարցեր, COVID-19 համաճարակով պայմանավորված ԱԷՄԳ գործունեության առանձնահատկությունները և ձեռնարկվող միջոցառումները։ Ուշադրություն դարձվեց միջազգային ծրագրերի իրականացմանը՝ «ԶՈԴԻԱԿ» ծրագրին և միջուկային տեխնոլոգիաների օգտագործմամբ օվկիանոսում պլաստիկի հայտնաբերման և մշակմանը։

   Առանձնահատուկ ուշադրության արժանացավ առաջին անգամ կազմակերվող «Միջազգային օրենսդրություն» խորագրով միջազգային կոնֆերանսի անցկացումը Վիեննայում։
7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր**

   Հանդիպում է կայացել ԱԷՄԳ Միջուկային տեղակայանքների անվտանգության դիվիզիոնի ղեկավար տիկին Աննա Հայդուկ Բռադֆոռդի հետ։

   Հանդիպում է կայացել ԱԷՄԳ Միջուկային պահպանության դիվիզիոնի ղեկավար տիկին Ելենա Բուգլովայի հետ։

   Անդրադարձ է կատարվել ԱԷՄԳ-ի կողմից Հայաստանում անցկացված առաքելությունների արդյունքներին, տրված առաջարկությունների և խորհուրդների կատարման ընթացքին։

   Հանդիպումների ընթացքում ներկայացվել է Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքը և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումները։ Ներկայացվել է նաև ՀԱԷԿ և միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի մարտահրավերները և ԱԷՄԳ հետ համագործակցության ուղիները։

   Հանդիպում է կայացել ԱԷՄԳ տեխնիկական համագործակցության դիվիզիոնի ղեկավար տիկին Եվա-Կուլլի Կալայի հետ։

Անդրադարձ է կատարվել ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության ընթացիկ ծրագրերին, ինչպես նաև նախատեսվող նոր ծրագրերին և միջազգային ծրագրերին: ԱԷՄԳ կողմից ներկայացվեց, որ Հայաստանը ընդգրկվել է Եվրոպական ռեգիոնի 5 երկրների ցանկում, որոնք կմասնակցեն «ԶՈԴԻԱԿ» ծրագրին: Ծրագրով նախատեսվում անասնաբուժական լաբորատորիաների ստեղծում և զինում, որոնք կուսումնասիրեն կենդանանական ծագման վիրուսների և մարդկանց վրա ազդեցության ուսումնասիրումը: Լաբորատորիաները կլինեն ընդհանուր լաբորատարիաների ցանցի անդամներ և կկիսվեն հետազոտությունների արդյունքները: Հետազոտությունները թույլ կտան կանխարգելել և խուսափել COVID-19 նման հիվանդությունների տարածումը:

Առաջարկվեց մասնակցել նաև «ՆՈՒՏԵԿ Պլաստկս» ծրագրին, որի նպատակն է միջուկային տեխնոլոգիաների օգտագործմամբ ուսումնասիրել և հետազոտել օվկիանոսում պլաստիկի հայտնաբերման և պլաստիկի մշակման տեխնոլոգիաները: Ծրագիրը կաջակցի պայքարել Երկիրը պլաստիկ աղտոտմանը:

Ներկայացվել է շրջակա միջավայրի մոնիտորինգի և ճառագայթային անվտանգության ռեֆերենսային լոբորատորիայի տարածքի և դրա վերանորոգման աշխատանքների ընթացքը: ԱԷՄԳ կողմից նշվել է աշխատանքների արագացման անհրաժեշտությունը և վերանորոգման աշխատանքներից հետո փորձագետի այցը, որից հետո կսկսվեն անհրաժեշտ սարքավորումների գնումը, առաքումը և լաբորատորիայի տեխնիկապես զինումը:

Տեխնիկական համագործակցության դիվիզիոնի աշխատակիցների և փորձագետների հետ քննարկվել են նաև տեխնիկական համագործակցության ծրագրով իրականացվող առանձին խնդիրներ:

Հանդիպում է կայացել Շվեդիայի կարգավորող մարմնի ներկայացուցիչների հետ:

Համատեղ ներկայացվել են իրականացվող աշխատանքները և խնդրահարույց հարցերը: Քննարկվել են երկու կարգավորող մարմինների համագարծակցության ուղիները: Որոշվել է կազմակերպել շվեդական կողմի այց Հայաստան, որի ընթացքում կքննարկվեն համագործակցության ոլորտները և կպատրաստվի համագործակցության հուշագիր:

Մասնակցել եմ նաև ԱԷՄԳ հարթակ՝ փոքր մոդուլյար ռեակտորների և դրանց կիրառման (The IAEA Platform on Small Modullar Reactors (SMR) and their Application) հանդիպմանը, որտեղ ներկայացվեցին փոքր մոդուլյար ռեակտորների կիրառման և կարգավորող դաշտի ուսումնասիրմանն ուղղված աշխատանքային խմբերի ամփոփ արդյունքները և ներկայացվեցին ստեղծվող հարթակի դերը՝ փոքր մոդուլյար ռեակտերներով հետաքրքրվող երկրների համար տեղեկատվական փոխանակման հարցը:

Մասնակցել եմ նաև ԱԷՄԳ կարգավորող մարմինների ղեկավարների հավաքին, որի ընթացքում քննարկվեցին կարգավորող մարմնում կանանց դերի բարձրացման անհրաժեշտությունը, «Վաղ արձագանքման կոնվենցիայից» բխող միջոցառումներ և վթարային պատրաստվածության արձագանքմանն ուղղված միջոցառումները:

Իմ կողմից ելույթ չի ներկայացվել:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել ԱԷՄԳ-ի կողմից իրականցվող տեխնիկական աջակցության ծրագրերին Հայաստան ներգրավածությունն ավելացնելու նպատակով: ԱԷՄԳ համապատասխան պաշտոնյաների հրավիրել ենք Հայաստան

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Շարունակել և ընդլայնել համագործակցությունը ԱԷՄԳ-ի հետ:

9/25/2021

X

ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN VAHE 2604780283

Վահե Գրիգորյան
25/09/2021թ.